չեր և հողմայոյզ էր, և տակաւին մեղմաբար անձրեւիցէր, յանձնեալ զիս Աստուծոյ և Սրբոց խնամակալուաց իմոց, մանաւանդ հրեշտակիս պահապանի և Սրբոյն Կայէթանոսի, աշխարհականաւ զգեստու, հետեւակ, ցուպ ի ձեռին ելի ի վանացն, ունելով առ իս զ'14 զլօթիս Լեհաց, որպէս ասացի։ Յառաջագնացութեամբ սպասաւորիս դիմեցի դէպ ի կախաղան քաղաքին, ուստի համարէի աջողակի անցանել. զննելով դաւազանաւ զուղին՝ ի փոխելն զքայլս՝ վասն մթանն և տղմայն։ Եւ հասեալ ի ջաղացն՝ որ առ ստորոտով լճին Պուղտանուվքայի, լուայ զձայն Ավէտաց ի նմին և երկեայ. այլ և չունն ի դրաց սկսաւ հաջել։ Աստ սասանումն և ահ մեծ, գուցէ յազդմանէ չանն արտելեալք՝ զբռնութիւն ինչ առնիցէին ընդ մեզ. որ և յերկիւղէ անտի դողումն ծնկաց և բոլորի մամնոյս կալաւ զիս, մինչ գրեթէ յոտին կալ ոչ զօրիցէի. սակայն սրտապնդեցեալ յուսովն Աստուծոյ և Սրբոց խնամակալուացս, զորս ջերմապէս վերակարդայի, փութացայ յառաջել և անդր։ Իբրեւ հասի ի խրամ լճին վերասացելոյ, ուր գերան մի փոխանակ կամրջի ձգեցեալ էր, և կամէի ընդ այն անցանել, զի չէր յայլուստ հնար, յանկարծ լպրծեցեալ ոտս՝ անկայ ի վերուստ ի խորն տղմալի ձախակողման. որ եթէ գահավիժեցեալ իցէի յաջակողմն կամրջին ի խորխորատն որ ստորեւ կայր, արդարեւ կամ բեկում անդամոց կամ մահ իցէր հետեւելոց։ Արտաքարշեցեալ անտուտ ի սպասաւորէն, գնացաք ընդ ուղիս շաղախուտս՝ ցանկամիջոց Պուղտանուվքային. մերթ անցանելով աստ և անդ ընդ խրամս պարտիզաց և ծառատնկոց, զի խոտորիցէաք ի ճանապարհէն հասարակէ, գուցէ պատահիցիւր ոք ի թշնամեաց. ոչ սակայն կարէաք ի Ավէտաց խուսել, որք գրեթէ յամենեսեան խուղս կողմանցն, որպէս և ընդ բոլոր արտաքաղաքն շուրջանակի լիք էին։ Եւ իբրեւ հասինք ի գերեզմանատունն Հրէից, զի ընդ այն անցանելոց էաք, արտաքս ի խրդէ իմեմնէ վազեալ Ավէտ ոմն, խրոխտականաւ ձայնիւ՝ ոչ գիտեմ զինչ բարբանջելով՝ տարաբերիւր անդաստական. որոյ յերկիւղէն՝ ի տեղւոջն ուր կայաք՝ ի մէջ մացառացն խտից կրկղեալք գաղեցաք։ Իբրեւ երիցս կամ չորիցս զնոյն բարբառ կրկնեալ՝ եմուտ վերըստին ի խուղն, անդէն յորդեցան ձայնք աղմկաց խառնիճաղանճք. և գիտացի բանակռուիլ նոցա ընդ իրեարս. ապա յարուցեալ դիմեցի դէպ առ ուղին արքունի՝ որ ընդ կախաղանաւն, որ զերծ ի բնակութեանց է. և անտի խուսեալ դոյն ինչ զառ ի վեր և դարձեալ զառ ի վայր, ընդ պարտիզաքն՝ որք ի կողմանս վանաց Սրբոյն Գէորգեայ և Մարիամայ Մակդաղենացւոյն, ընդ մացառուտս և եղեէջս դժուարինս և մարգս և ճախինս որք ի նոսա, յ'որս բաղմիցս անկանելով, և օգնութեամբ սպասաւորին կանգնելով, հասի ի տափարակն անշէն. ուր և լուսաշաղեցաւ այգն։ Աստէն զտեղի առեալ՝ գոհացայ մեծապէս զԱստուծոյ՝ ընդ փրկելն զմեզ յայնքանեաց վտանգից դիշերոյն և թշնամեաց, ընդ որոց միջի անցոյց անվնաս։ Եւ ի խոկալս թէ յոր կողմն դիմիցէի անքոյթագոյն, թէ և ի մտի եդեալ իցէի գնալ ի Սթանիսլաւով, շրջակն ածեալ՝ տեսի դխարց իմն ընդարձակ ի հանդիպոջն արեւե-